ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «09» 06 2014թ. № 552-Ա

«ՇԻՆՍԵՐՏԻՖԻԿԱՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՄԻ ՇԱՐՔ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՂ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և 20-րդ հոդվածի 2-րդ մասը, հաշվի առնելով նույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 24-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Շինսերտիֆիկատ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը նշանակել որպես տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին այն արտադրանքի տեսակների համար, որոնց վրա տարածվում են հետևյալ տեխնիկական կանոնակարգերը՝

1) ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի «Բետոնի ամրավորման համար օգտագործվող պողպատե արտադրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 179-Ն որոշում

2) ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 10-ի «Ցեմենտներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1136-Ն որոշում

3) ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի «Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և այդ հիմքով պլաստմասսայե արտադրանքների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 679-Ն որոշում

2. «Շինսերտիֆիկատ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը նշանակել 3 տարի ժամկետով, տրամադրել նշանակման վկայական և շնորհել նույնականացնող համար՝ Ն-02(Հ-02)2014:

3. ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի «Համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանի ձևը և վարման կարգը հաստատելու մասին» N 801-Ա հրամանով սահմանված կարգով «Շինսերտիֆիկատ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գրանցել համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Գ. Բաղալյանին:

ԿԱՐԵՆ ՃՇՄԱՐԻՏՅԱՆ